

2016թ. հունիսի 18-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 28-ը:

Նախագահ՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի 2015-2016 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

2. .ԳՊՀ հեռակա ուսուցման 2015-2016 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

/զեկ՝ Ն.Կուտուզյան/

3.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրին դեկանները: Առկա ուսուցման ֆակուլտետներում, ինչպես նշեցին դեկաններ Թ.Ասոյանը, Հ.Ղաջոյանը, Մ.Ավագյանը և Ս.Ամիրխանյանը, եղել է խորհրդատվությունների, շրջանավարտների դիպլոմների միջուկների պատրաստման, քննական հարցա-տոմսերի կազմման, ամփոփիչ ատեստավորման քննությունների անցկացման ժամանակաշրջան: Ընդհանուր քննաշրջանը դեռ չի ավարտվել, ուստի արդյունքների ամբողջական ամփոփում կատարել առայժմ հնարավոր չէ, կարելի է միայն նախնական որոշ եզրակացություններ անել. քննություններն անցել են բնականոն հունով, հանձնաժողովներն աշխատել են նորմալ աշխատանքային պայմաններում, արտակարգ դեպքեր չեն գրանցվել: Մագիստրատուրայի և ավարտական աշխատանքների պաշտպանությունները անցել են հիմնականում բարձր մակաարդակով: Հանձնաժողովների նախագահները իրենց գրավոր կարծիքներում արտահայտել են գոհունակություն թե՛ աշխատանքային պայմաններից, թե՛ ավարտական աշխատանքների ու մագիստրոսական թեզերի կատարման որակից, թե՛ ուսանողների ցուցաբերած գիտելիքներից: Զեկուցողները ներկայացրին նաև հանձնաժողովների նախագահների կարծիքները թեմաների ընտրության,

հարցաշարերի կազմման, գրախոսականների որակի և հարակից հարցերի վերաբերյալ՝ տալով համապատասխան գնահատականներ:

Հեռակա ուսուցման ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման արդյունքները ներկայացրեց պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Նա նշեց, որ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում աշխատանքներ են տարվել հեռակա ուսուցման ֆակուլտետի ուսանողներին ակադեմիական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ, կազմակերպվել են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություններ և անհատական աշխատանքներ: Դրանք օգնեցին ուսանողներին հաջողությամբ հանձնել ավարտական ատեստավորման քննությունները: Ճիշտ է, եղան նաև անբավարար գնահատականներ, սակայն դրանք որակ չէին կազմում: Առարկայական հանձնաժողովների նախագահները բարենպաստ կարծիք արտահայտեցին քննությունների կազմակերպման և անցկացման պայմաններից:

Քննարկվեց տնտեսագիտության թեկնածու Գ.Խաչատրյանի «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման մեթոդական ուղեցույց» ձեռնարկը տպագրության երաշխավորելու հարցը:

Հարցերի վերաբերյալ ելույթ ունեցան գիտխորհրդի մյուս անդամները՝ արտահայտելով իրենց տեսակետները և անելով օգտակար առաջարկություններ:

Հիմք ընդունելով ելույթներն ու զեկուցումները՝ գիտխորհուրդը Որոշեց՝

- 1.Դեկանների զեկուցումներն ընդունել ի գիտություն:
- 2.Ն.Կուտուզյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:
- 3.Տպագրության երաշխավորել տնտեսագիտության թեկնածու Գ.Խաչատրյանի «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման մեթոդական ուղեցույց» ձեռնարկը:

Գիտխորհրդի նախագահ՝
Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան
Թ.Ասոյան